Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված անձիք**

Մարինե Սարիբեկյան — շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Այցելություն Թուրքիա, ք. Ստամբուլ՝ 2023 թվականի սեպտեմբերի 27-28-ը

3. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**

Միացյալ ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում գյուղատնտեսության ոլորտում կլիմայական գործողությունների առաջմղման վերաբերյալ աշխատաժողովին: Հանդիպման նպատակն է աջակցել տարածաշրջանի երկրներին՝ նախապատրաստվելու կլիմայական բանակցություններին Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կողմերի 28-րդ Համաժողովին (COP28) ընդառաջ, մասնավորապես՝ կենտրոնանալով գյուղատնտեսության ոլորտի կարևորության վրա՝ կլիմայի փոփոխության և կլիմայի գործողությունների համատեքստում:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- ✓ Կորոնիվայից Շարմ Էլ Շեյխ գյուղատնտեսության ոլորտում համատեղ աշխատանք՝ կլիմայական գործողությունների իրականացման ուղղությամբ գյուղատնտեսության և պարենային անվտանգության վերաբերյալ,
- ✓ Ճանապարհ COP27-ից COP28 – ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներգրավվածությունը և աջակցությունն երկրներին,
- ✓ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցություն. Պարենի և գյուղատնտեսության համար կայուն վերափոխում և այլ նախաձեռնություններ,
- ✓ Կլիմայի և շրջակա միջավայրի ֆինանսավորում. կլիմայական գործողությունների համար այժմ և ապագայում,
- ✓ Կլիմայի փոփոխության համատեքստում գենդերային գործողությունների ինտեգրում հիմնված տարածաշրջանային ուղեցույցի վրա՝ «Գենդերային գործողությունների ինտեգրում կլիմայական ներդրումներում», ՊԳԿ-ի առաջնահերթությունները, տարածաշրջանային գենդերային գործողությունների 2023-2026 թթ..-ի ծրագիրը,
- ✓ Փարիզի համաձայնագիր և ընդլայնված Թափանցիկության շրջանակ (ETF),
- ✓ Գիտության վրա հիմնված տվյալներ ստեղծելու համար անասնաբուծության ազդեցության գնահատումն էկոհամակարգերի և կլիմայի փոփոխություն վրա,
- ✓ Ազգային սահմանված գործողությունների (NDC) Գործընկերության ներգրավվածությունը Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Բոսնյա և Հերցոգովինայի, Ղազախստանի, Ղրղստանի, Մոլդովայի, Սերբիայի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Թուրքիայի, Ուզբեկստանի և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ հրավիրված էին 35 ներկայացուցիչ:
Հանդիպման առաջին օրը երկրների ներկայացուցիչները բաժանվեցին աշխատանքային խմբերի, ես ընտրվեցի աշխատանքային խմբի ղեկավար և ներկայացրեցի խմբի արդյունքները, քանի որ Հայաստանը ներկայացված հարցադրումների և կատարված աշխատանքների մեջ առաջադեմ էր բոլոր երկրներից:
Հանդիպման երկրորդ օրը ես հրավիրված էի մասնակցելու պանելային քննարկման, ներկայացրեցի Փարիզյան համաձայնագրի ներքո ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050թ.) ռազմավարության

մշակման ընթացքում առաջացած մարտահրավերների, քաղած դասերի և լավագույն ձործի վերաբերյալ:

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Որոշ երկրներ ձեռք բերեցին պայմանավորվածություններ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) միջոցով իրականացնել իրենց «Թափանցիկության շրջանակի կառուցում» (CBIT) ծրագիրը:
«Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) ներկայացուցիչը ներկայացրեց իր մշակած ծրագիրը՝ առաջնային տվյալների ապահովման կառավարման վերաբերյալ (վճարովի հիմունքներով), ինչը հնարավորություն կտա երկրներին պատշաճ կերպով կատարել իրենց ստանձնած պարտավորությունները՝ Երկամյա թափանցիկության հաշվետվությունը ներկայացնելու գործում:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ձեռք բերվեց նոր գիտելիքներ և փորձ մասնակցելու կլիմայական բանակցություններին Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կովենցիայի Կողմերի 28-րդ Համաժողովին (COP28) ընդառաջ, մասնավորապես՝ կենտրոնանալով գյուղատնտեսության ոլորտի կարևորության վրա՝ կլիմայի փոփոխության և կլիմայի գործողությունների համատեքստում:

*Գործուղվող՝* *Մարինե Սարիբեկյան*

*15.11.2023 թ.*